


ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԻՆ
 Ե. ՓՈՒՐԱՅ ՈՂՁ
 Նամակ կամ որ եւ է
 գրութիւն պէտք է ուղղել առ
 Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ յրազրի
 ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵՎԻԳՏՈՍԻ ՉՄՄՈՐՁ
 Տարեկան ողջ դահլիճ. 60
 Կեցանկեայ » 35
 ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴ
 Տարեկան ծրակ 20
 Կեցանկեայ » 12

E. TOROSSIAN
 Direc.-propr. du journal arménien
 ARCHALOUYCE
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՒԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 Եւ թղթատարի ծախքը,
 հոկտոբրեան վրայ է :

հոկտոբրեան ուղղուած
 գրութիւն է՝ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ
 Կանխիկ ձեռնարկի են

Կ Ղ Ե Ր Ը

— 306 —

Ի բայ անհալ օտար ազգաց կղերները, ի մասնաւորի կուզեմ հարցում մը ընել, և այս մասին սակաւ ինչ բացատրութիւն տալ, ինչ ինչ է հայ կղերը հայ եկեղեցւոյն մէջ :

Իրոեմ որ այս հարցման մէջէն երկնից հրեշտակներն անգամ չեն կրնար ելլալ, բայց ես միմիայն իմ փորձառական տեսութեամբ կուզեմ ըսել ինչ որ ճշմարիտ իրողութիւն մ'է :

Ի՞նչ է կղերը .
 Ի՞նչ պիտի ըլլայ . սրբութեամբ և հաւատարմութեամբ Աստուծոյ ծառայելու ուխտեալ մը, որ երկրի վրայ Աստուծոյ փախանդաղն է, և երկնից մէջ ի կարգս սրբոց դասեալ բարեխօս մը առ հայրն երկնաւոր :

Ըսել է սիրելի պաշտելի և մեծարելի հոգի մը, որ մարդէ ծնած, սրբազործեալ էակ մ'է հոգեկան աշխարհին մէջ . միտլ բանի երկրի վրայ հոգեւոր հայր մը, որբերու և այրիներու խնամակալ մը, զրկեալներու հպնչապան մը, և Հայրստանեայց եկեղեցւոյ թշնամեաց դէմ մարտնչող ախոյեան մը, ոչ խաչի և տետարանի վէճով գերադրականապէս զինուած կը յայթաջարէ հակառակորդը, և ուր ուրեմն կը փոխի յերկինս լսել առ երանաւէտ ձայնը թէ « Ե՛կ առ իս աշխատեալ և ծանրաբեռնեալ, զի ես հանգուցից զքեզ » ալ այնուհետեւ մարդ չէ, այլ հրեշտակ մը :

Իսկ երբ սրբութիւն և ուխտ առ ստն կը կոխէ, և սրբերն ու այրիները կը լքանեն, ազգային և եկեղեցական իրաւունքները կը բռնաբարէ, զրկեալները կը հարստահարէ, եկեղեցւոյ թշնամեաց զօրովիդն կ'ըլլայ ռաջլարհական ամեն հաճոյց հետամուտ, կղերական սրբազործեալ սքեմին տակ կ'ընէ ինչ որ մարդկանց զղուելի և Աստուծոյ ատելի է :

Եւ երբ յերկինս փոխուի, չուրը ինկած կատուի պէս կը կծկտի իւր ծովացեալ մեղացն առջև, և կը լսէ Աստուածային անհրատաստ ձայնը թէ « Ե՛րթ յինէն անիծեալ ի հօրն յաւիտեանական », այլ այնուհետեւ մարդ չէ այն, այլ սատանայ մը, որ հոգեւոր պաշտօնավարութեան սուրբ քօղին տակ մեղքերու գետեր յորդեց, մինչև որ իւր սրժամի պատիժը գտաւ :

Այս համառօտ տեսութիւնը խմբագրականի առարկայ ըրի, որ սատանայ ըլլալու

փափաք չ'ունեցող կղերը կարգայ, և աշխատի հրեշտակ ըլլալ, որում կենօք չափ պէտք ունի մեր ազգն ու եկեղեցին :

Ահա թէ առտու իրիկուն ուր սր ալ ըլլայ ձեռքերնին լամբուրելով յարգած կղերնին, չ'գիտենք թէ՛ հրեշտակ են կամ սատանայ :

Միայն այսչափը գիտենք որ, ոմանց զղուելի գործքերը կը նշուակեն զիրենք թէ Վժռիս քէն փախած, կամ որ ճշմարիտն է յորովայնէ ընտրեալ սատանաներ են, որոց համար կը բարեմաղթենք որ Աստուած անմեղ, կամ աւելի ճիշտը անմիտ բարեպաշտը պահէ, վասնզի եթէ Դաւիթ մարգարէի հետ տեսնուիս, այսպէս կ'ըսէ « Լաւ է իմաստուն մեղաւոր, քան յիմար արգար » :

Ուրեմն մարդ պարտաւոր է իւր կրօնից մէջ յիմար արգար ըլլալով այս օրինակ ամբարիշտներու կործանիչ, ու աւերիչ, և ապականիչ ծուղակը իյնալու, քիչ մ'ալ իմաստուն մեղաւոր ըլլայ, և իր պատիւը և իրաւունքը պաշտպանել գիտնայ, որուն մարդն ալ կը հաւանի, Աստուած ալ կը հաճի :

Ն Ա Մ Ա Կ Գ Ա Հ Ի Բ Է Է Ն

ՈՒՐԻՅՆԵՐ ԱԼ

— 307 —

Գահիրէի հայոց Որբսխնամ ընկերութեանց կանոնագիրը կարգալու ստեղծ, գիտեցինք որ Ազգային ժողովոյ կողմանէ վաւերացուած ժամանակ, յօդուած մը սուղցուած է թէ՛ երբ յիշեալ ընկերութեան գործադիր ժողովը զեղծում մը ընէ, ազգային ժողովը իրաւունք պիտի ունենայ զեղծարար ժողովը լուծել տալու, և զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմ. Շէյխ էթմանի գոյքերու հոգեցակին անյայտանալով՝ ազգը երբ տուգանքի և ծախքերու ենթակայ որ կ'ըլլայ. զեղծում չ'է. արմաւի ծառերէն մէկ քանի հարիւրներ երբ կը պակսին, զեղծում չ'է. բնականաբար ասոնք մէկ քանի տարուան մէջ պակասած ըլլալով հանդերձ մինչ ցարդ կառավարութեան սուրբ կը արուի. զեղծում չ'է. հանգուցեալ Պօղոս էֆէնտի կարապետեանի կտակի մասին ստորագրեալ անձամբ երկու անգամ ժողովոյ ներկայանալով ձէտք եղած բացատրութիւնը տալէ վերջ, ազգային ժողովը գոհ ընելու համար մեզմէ ինչ որ պահանջին, պատրաստ ենք գրաւոր կերպիւ ապահովել, ըսելու հետ վերջ, նանգուցեալ զստեղծող կողմանէ գրաւոր կերպիւ սպանովութեան առաջարկին ականջ գոցել և վարժարանի համար տարեկան 30 ոսկիի և կամուար վտանգի ենթարկելով, Պետրոս էֆ.

կարապետեանի դէմ դատ վարելը որ չորս տարեկան տղան անգամ գիտէր թէ՛ պիտի չկրնան յաջողիլ նոյն թիւէն ստանալու 30 ոսկին, քան զի դատարանը յայտնի է որ պիտի պատասխանէր թէ քանի որ կտակը դատի տակ է, կարապետեան էֆ. ն ճնշման տակ զնելու իրաւունքէն զրկեալ է, ինչպէս որ եղաւ. ազգին ծախքերը իկորուստ մատուցելէն զատ կարապետեան էֆին. ըրած ծախքերն ալ տուժեց ազգային անտուղը. զեղծում չ'է. Ասոնք միայն իմ գիտած զեղծումներս են. ուրեմն ինչու է կայ ու կը կենայ այդ ժողովը. ժողովուրդը լաւ համոզուած է թէ օրէնքէ զուրկ եղող վարչութիւն են. ինչչափ փաստներ կրնան հասցունել ազգին, ու՛ր սր օրէնք չ'կայ պատասխանատուութիւն չ'կայ. ու՛ր որ պատասխանատուութիւն չ'կայ, ստեպ կը պատահին զեղծումներ :

Նոր խնդիր մըն ալ .
 Այս օրերս Շէյխ էթմանի հողին վրայ գրացի ֆէլլաներէն մին շէնք մը շինել սկսած է կ'ըսուի. բնականաբար ֆէլլաներ իր հողին կից եւ իւր հողերէն աւելի արժէքաւոր կտորի մը վրայ կը կառուցանէ շէնքը. գիւղին շէյխ պէլէտը Առաջնորդարանի լուր տուած ըլլալու է անշուշտ. (Թաւշանայ քաջ թագիկէ թուր) ըսել է շէյխ պէլէտին ըրածը. երբ առաջնորդարանը արգելելու ելլէ, պիտի ըսուի թէ՛ վաւերացուցեք այս կտորին ազգին պատկանած ըլլալը, և ապացուցանելու համար ուրիշ միջոց չ'կայ, եթէ ոչ՝ « միւտիբիլէթ » ին պրել (մէսսահներ) գետինը չափողներ բերել տալ, աշխատել և ծախել. կ'ըսուի որ շէնքը շինել տրուող ֆէլլանը սահմանակից է հողին, և լաւ ուսումնասիրած է թէ՛ ազգին հողերուն շորս կողմի սահմանները գիտցող չ'կայ. նաեւ աղէկ սեղեակ ալ է թէ հիւճէթին մէջ գրուած այս չափ ֆէտաէն հողերուն մէջ մէկ քանի ֆէտոտան աւելի կը գտնուի. առիթէն օգուտ քաղելու ելած է. և կող չափողները չորս կողմի գրացիաց հողերն ալ կը չափեն. հաշիւը գտնելու եւ սահմանները ձգելու համար. որով գրացիաց հողերը իրենց ունեցած (վըրտ) ըսուած թուղթերուն համեմատ կը յանձնուի և (ակըզ) որ պակասած ըսել է, աւելցածն կ'օգտուին իրենց պակասը լեցնելով ծախքեր և հոգնութիւններէ ազատ ըլլալով հանդերձ. ճշմարտութիւն մ'է թէ, քով քովի եղած կտորներն, մէկը միւսէն աւելի կամ պակաս արժողութիւն կ'ունենան. իւր հողէն որ միւսէնոյն հողին կից էր արժէքէն պակաս եղած կտորն կը մնայ. ինչչափ որ ըլլայ, աւելի գտնուած հողը (զատ էլ մէսսահան) չափէն աւելի ըսել է նոյն վայրկեանէն կառավարութեան կը պատկանի որ անմիջապէս աճուրդի կը գրուի եթէ մէկ կրտալ ըլլայ իսկ, և փառսուորսպէս կը ծախուի. առաջնորդարանը ծախսեց և յոգնեցաւ. գրացիներ զէջ կտորը լաւ կտորի մը հետ փոխանակեց. եթէ չափէն պակաս ունէր ալ նէ ապատիկէին աւելցած կտորէն պակասը լրացնելով օգուտ քաղեց. կառավարութեանէն եկած « մէսսահներն » ալ իրենց աշխատանաց փոխարէնը

գանձելէն վերջ, գտած նոր գանձերէն ուրախ կ'անեն կը քաշեն. այս կէտին վանեցիին առակը միտքս եկաւ. էջիէթը ես քաշեմ խայժալը Գասպարը ուտէ. չը մտնամ խոտովանիլ թէ այս նոր խնդրոյն մէջ առաջնորդարանը յանցաւոր չէ. այս կերպ գատեր հարիւրաւոր անգամներ պատահած է եղիպտաբնակ հողատէր տկար անձանց. կ'երեւի թէ յիշեալ Ֆելլաճը պատրիզանէ անունէն ժամանակին կը վախնայ եղեր. իսկ այժմ երբ նոր գէպքերէն համոզուած հասկցաւ թէ տակը բորբոս վրան սուրբ Թորոս է եղեր, օր յառաջ օգտուիլ ուզած է:

Այս գէջ չէ, սակայն կ'ուզենք հարցնել թէ, երբ ազգային ժողովները զեղծում գործեն, զիրենք ո՞վ պիտի լուծէ. ահա փափուկ կէտը:

Կ. ՄԻՀԱՆՕՅ

ՍՐԲԱՅԵՐՆ ԿԱՅՅՈՒՄ

—*—

Այն աղջկան հետ խօսք մէկ ըրինք, մօրմէն գաղտուկ անտառ գացինք: —Երբն է սիրոյ յառաջաբան ըսինք այս է սրտի մօտան. — ուստի առինք Հայոց երգեր, ում արձագանգ առին լեռներ, եւ լցուցին մեզ սիրարժարձ քաղցրիկ ոգւով մեր Հայրենեաց:

Ո՞վ որ սիրով շարժի սգատ անոր զբախտ է անապատ:

Երբոր տեսանք թէ ենք միմեկ, ալ սկսանք ընել կտտակ. չա՛թ, ես անոր, փա՛թ, ան ինձի ու բարձրաձայն հահահ, հիհիհ. վեր վազեցինք վար վազեցինք, ցատկոտելով օրն անցուցինք. սիրոյ ժամերն ու զրօսանք երջանկութեան բերին հոսանք, արեւն անցաւ հորիզոնէն, ու չ'սպասեց լոյս տալ վերէն աւանդ ձգեց մեզ գիշերին, գնաց ի մուտ իւր երկկին. —մու՛թ է — ըսինք, ալ տուն դառնանք, սակայն մութին ի՞նչպէս երթանք:

Պահ մը առաւ մեզ մամտուք, կեցանք անձայն, եւ անշուք. լու՛ռ, մէկ մէկու կը նայէինք եւ նայուածքով այս կ'ըսէինք. —անփորձ հասակ մեր վառվառն, եւ ծնողաց անհոգութիւն մեզի մի խոր վիճձեցին ուրիշ ելնելն է գօտարին — սակայն եղածն անցաւ գնաց, մտմտութի հարկ չ'մնաց. սէրը թէեւ ըլլայ անմեղ, կը խոտորէ մարդը շատ հեղ, ալ հասկցանք, չ'կայ մեզ ճար, պահպանուելու չ'ունինք մի վայր. ո՛չ անկողին, եւ ո՛չ ծածկոց չ'կայ մեզի հանգիստ ննջոց ուզենք չ'ուզենք. անտառին խոր պիտի մնանք, պսակինք այսօր ուստի կանաչ մարբանդներուն վրայ փռուած, ինկանք իսկոյն... Մորֆէն ինկաւ, ու մեր աչքեր փակեց թնով անուշաբեր, խոխով ձայնիկն աղբերակին ու մեղմ վեղիւս օ՛ր օ՛ր ըսին, եւ արթնցանք, ո՛հ ինչ հզաւ. երազ մի էր, եկաւ, անցաւ:

Ս. Յ.

Սիրայիկ վեպեր երբ բարոյակակի մը վերջաւորութեամբ չ'հրահանգի ընթերցողը. վնասակար է, եւ ոչ քննախն ոգակար, ուստի փայտաբեր է որ « Սիրայիկ Կայծերու » բարոյակակին ուշադրութիւն չիկի:

ՆՈՅՆ

ՊՕՂՈՍ ՓԱՅԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՍԷՋ

—o—

Անցեալ հինգշաբթի գիշեր Վսեմափայլ Պօղոս փաշայի ապարանքը բացուած էր, շքեղ, իշխանական հանդէսի մը համար որ իր տեսակին ամենափայլունն էր:

Խտիվական ընտանիքին իշխանազուններն, զիււնագէտներ, հիւպատոսներ, վերջապէս գահիրէի հայ շայն զասակարգը, փութացած էր պատասխանել Ն. Վ. Պօղոս փաշա նուպարի հրահրին:

Պարտէզները լուսազարդուած էին և խորը՝ ապարանքին ամեն պատուհանները կը բոցավառէին. Ընդունելութեան դահլիճ մը, ծխասենեակ մը և պարասրահներ պատրաստուած էին Ն. Վ. Պօղոս փաշա, Տիկին Պօղոս փաշա, իրենց ծաղկափայտ սիրուն օրիորդը, համեստափայլ եւա և զաւակը Առաքել պէյ, հրաւրեալները կ'ընդունէին, այն քաղաքավարութեամբ և ազնուութեամբ, որք իրենց գրաւել տուած են այնչափ համակրութիւններ:

Տիկին Պօղոս փաշա հագուած էր ճերմակ ու վարդագոյն և ժանեկահուռ զմայլելի արդուզարդով մը:

Բոլոր հրաւրեալներն ալ ճաշակի և արդուզարդի շքեղութեան մասին կարծես մրցումի ելած էին, այդ սքանչելի երեւոյթին մէջ փայլելու համար:

Կէս գիշերին մօտ, դահլիճին երեւոյթը՝ ուր 400 հոգիէ աւելի հաւաքուած էին, իրօք գիւթական էր. առաջնակարգ նուազախումբի մը շնչոտեղով բազմաթիւ զոյգեր կը վալսէին ամենամեծ ոգևորութեամբ:

Ընթրիքը նուկովիչէն պատրաստուած էր և միայն այս անմրցելի վարպետին անունը յիշատակել կը բաւէ վստահ ըլլալու համար թէ՛ խորտակացուցակը հիանալի էր, որ ահաւասիկ:

- Consommé Impérial
- Saumon du Rhin Cardinal
- Truites à la Moscovite
- Suprême de Poularde à la Nemours
- Cailles à la Bohémienne
- Asperges d'Argenteuil sauce Mousseline
- Fonds d'Artichauts à la Française
- Punch à la Romaine
- Faisans d'Ecosse en Volière
- Becassines rôties sur toast
- Salade Froufrou
- Mandarines en Surprise
- Bombe Néluska
- Corbeilles de Friandises
- Desserts

Ապա պարը վերսկսած է աւելի մեծ ոգևորութեամբ և տեւած է — հարկ է ըսել մինչև արշալոյս. վերջնապարը (cotillon) հիանալի եղած է, ամեն սպասումէ գերիվեր շքեղութեամբ:

Ն. Վ. Պօղոս փաշայի տուած հինգշաբթի օրուան հանդէսը գահիրէի աշխարհիկ հանդէսներու մէջ ամենամեծ տեղը կը գրաւէ:

Հ Ն Ռ Ա Գ Ք Ի Ն Ե Ր

Սեւանիկ 16 Մարտ. — Օսմանեան շորքերը Թուրքո-Պուլկար սոհմանագլուխը զրկուած էին, որոնք գիւղացիներու գէմ նաբարութեամբ ու վայրենիութեամբ վարմեծ բռնուած են:

Մակեդոնիոյ հիւսիսակողմը գտնուող գիւղերուն ընտանիքները խմբովին Պուլկար սոհմանագլուխը կ'անցնին:

Սուլթանին պատուիրակը Թիւրխան փաշա ասկէ կը մեկնի քննութիւն մը կատարելու համար սահմանագլխին վրայ:

Քէյքթաուն 18 Մարտ. — Ժանտախտի 5 նոր գէպքեր կան, որուն մէկը զինուորական հոգաբարձութեան մէջէն է:

Կ. Պօլիս 18 Մարտ. — Նէճտի արալաց ապստամբութիւնը շատ ծանր ըլլալ չ'երևիր. շնորհիւ Օսմանեան զօրաց արագ միջամտութեան ապստամբները քիչ են, կը յուսացուի թէ՛ ապստամբութիւնը քիչ օրէն պիտի խեղդուի:

Վիէննա 18 Մարտ. — Պէրլին լուր տարածուած էր թէ՛ Օսմանեան զօրքերը Պուլկարիա արշաւեր են: Այժմ պաշտօնապէս հերքուած է այս լուրը, որ պարզապէս սակարանի խաղի մը համար հրապարակ հանուած էր:

Լոնտոն 18 Մարտ. — Տը Քուէթիճօ մանածու Սէնէքալի մէջ արձակուած է, Բըրուկինիէրի գօմանտօն կը շարունակէ շարժուել Բարի հարաւակողմը:

Բրիտանական խումբեր Ֆուրիէսի զօրագունդը կը պաշարեն Օրանտի մէջ, կը կարծուի թէ Ֆուրիէս անձնատուր պիտի ըլլայ:

Կ. Պօլիս 19 Մարտ. — Ապստամբական յայտարարութիւն մը կրող ազգեր փակցը ուելուն համար ոստիկանութիւնը շատ մը կտակածելի անձեր ձերբակալած է որոնց մէջ կ'ըսեն թէ կը գտնուի ներքին գործոց նախարարութեան պաշտօնեայ մը:

Արտաքին գործոց նախարարութեան ալ պաշտօնեայ մը կը փնտռուի տեղական իշխանութեանէն. կը կարծուի թէ այդ պաշտօնեան քանի մը օրէ ի վեր կծիկը դրած է: Մտքերու ընդհանուր գրգռումը մտատանջութիւն կը պատճառէ:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱԿՆՅԻ ԱԶԳԱՅԻՆՈՅ ՈՐԲԱՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գիւնարին կողմէ հետեւեալ նամակըն ստացած ենք ի հրատարակութիւն, թէ եւ այլևայլ բանաւոր պատճառներով անոր հրատարակութիւնը սակաւ ինչ յապաղեցաւ:

... Տնօրինութիւն « Արշալոյս » Լրագրի Առտ

Տէր Խմբագիր

Պատիւ ունինք ծանուցանելու թէ՛ քաղաքիս Ակնայ Որբանամ Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովոյ նիստը տեղի ունեցած է 1901 Փետր. 3 ին և նոյն օրուան նստին մէջ ըստ Ընկ. կանոնագրին կազմուած է ընդհ. ժողովոյ Գիւնն ու Գործ. ժողովը:

Գործադիր ժողովը իր գիւնարը կազմած է հետեւեալ կերպով:

- Տնօրինութիւն « Արշալոյս » Լրագրի
- Սարգիս Վաղարշան Գանձապահ
- Ալիբօսան Պոյաճեան Հայրուակալ
- Սարգիս Թաթարեան Խորհրդակն
- Մինաս Մարզպանեան
- Կարապետ Խանարեան

Դիւանս ծանուցանելով զայս՝ կը խնդրէ որ բարեհաճիք Պատ. թերթիք միջոցաւ յայտարարել յօգուս ընկերութեան :

Ընդունեցէք Տէր, մեր կանխանուէր շնորհակալիքը ու յարգանաց անկեղծ հաւաստիքը :

Ի Դիմաց Ակնայ Որբախնամ ընկերութեան Ընդհ. Ժողովոյ .

Բ. Ատենադպիր Ատենապետ
Ա. ԷՍԿԻՃԵԱՆ Ա. Մ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՄԵԼԻՔԵԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ . — Երեկ Բողոքական ազգայնոց Ազգապետարանէն, Տիկին Լուսիա Մելիքեանի և որդւոյն լիազօր փոխանորդին յանձնուեցաւ Էրաճի Շէրիս, որով Տիկին Լուսիա Մելիքեան ի պաշտօնէ խնամակալ կը կարգուի իր Դանիէլ անուն անչափահաս որդւոյն :

Նոր-Օրի փաստարան-խմբագիրը, յիշեալ թերթի ճերմ թուովը այս մասին ինչ ինչ ակնարկութիւններ ըրած էր, սակայն ստով իր մտաւոր կարողութեան չափին վերայ մեկի դաշտափար մը տուած ըլլալէ անդին չանցաւ. որովհետեւ ինք, երբ փաստարան պէտք էր որ գիտնար թէ՛ Հայոց Ազգ. առաջնորդարանը, ինչպէս ինք հասկցնել կ'ուզէր, վճիռ մը արձակելու իրաւասութիւնը չունէր և ոչ ալ այդ տեսակ որոշում մը տուած էր. Նոր-Օրի խմբագրին ըսածները ուրեմն, աւակական բացատրութեամբ, կրնայ ըսուիլ թէ՛ գոյրով աճըսիտ առաջ եկած է. որովհետեւ Տիկին Լուսիա Մելիքեան, զգալով Տիար Ս. Փափազեանի անձեռնհաս փաստարան մը լինելը, դարբեցուցած էր զինք Մելիքեան ժառանգութեան փոխանորդը ըլլալէ :

Շէժի ԷթմԱնէն ՎԵՐՁ . — Շատեր կը կարծեն թէ Շէյխ Էթմանի ազգային կառուածին մէջէն աներևութացած արմաւենիներն են միայն որ կը բողոքեն իրենց վրայ ի դարձ գրուած անիրաւութեանց հանդէպ :

Այդպէս չէ դժբաղդաբար. զեղծումներու կծիկը քակուած օրերու հանդիպած ենք. մէկը իր ետեւէն կը քայէ ուրիշներ և հաճի աղայական զանազան էթմաններ մերկապարանոց երևան կ'ուզան :

« Դորա լուսեցին քարին քղ աղաղակեսցին » ըսաւ, մեծ յեղափոխականը. հիմակ կարգը մերն է ըսել թէ « Արմաւենիք Շէյխ Էթմանի լուսեցին, եկեղեցւոյ նորաչէն աթոռք աղաղակեսցին » :

Աւետարանի քարոզութիւն մը ստեղծելու նպատակ չ'ունինք. մեր բառադարձութիւնները պէտք չէ՛ որ հեռիները առաջնորդեն մեր ընթերցողաց մտքերը. խընդիրը շատ պարզ և յստակ է և այն տեսակէն, որ միայն առաջնորդարանի ֆոյխներէն և եկեղեցեաց բանկալներէն ծնունդ կ'առնեն և աւագ խորանին առջև ծունկի կ'ուզան . . . :

Անցեալ օրեր թաղականի թէ քաղաքականի սքեմ հազմներ կամ անոնց բարակարոյժները, չենք գիտն : թէ ուր տեղէն լսած են որ շահելու համար սուղ և սակաւ ծախելէն աւելի լուսագոյն է արժան ու շատ ծախել և սպառելը, (միտ) ուստի նոր տուր և առի դորձ մը ստեղծելով անկէ օգտուելու համար, յարձակում մը կը գործեն եկեղեցւոյ աթոռներուն վրայ և մէկ հարուածով որոշում կուտան զանոնք փոփոխել, և նուազուրդի կը դնեն, որ վեր-

ջապէս յոյնի մը կը յանձնուի ծրարեալ 16 աթոռներու շինութիւնը :

Մեկի կը տեղեկացնեն թէ նուազուրդին մասնակցող հայեր իւրաքանչիւր աթոռի վրայ 70 դրձ . ի առաւելութիւն մը կը դրոնեն որուն համար բողոքած են Քաղաք. ժողովոյ : 16 բազմացներէ 1120 դրձ . բազմացներ . . . քսակի մէջ . շատ չէ :

ՊԱՉԱՍ ՄՈՒՐՈՒՐԻ ԸՆԹԵՐԳԱՐԱՆԻՆ ՄԷԿ քանի անգամոց խնդրանքով ստորև կը հըրատարակենք ընթերցարանի պարտքը վըճարելու համար եղած հանգանակութեան ցանկը :

Տեարք Գ. Սիրունեան մէկ նուերատում 5 ըշ. Օննիկ Պէյլէրեան 5 . Տուտեան 5 . Տ. Յովակիմեան 5 . Կ. Էրքէքչեան 5 . Պ. Յ. Նըշանեան 5 . Նշան Աշճեան 5 . Գէորգ Գալորեան 5 . Սեդրաք Գարբիէլեան 5 . Պ. Ն. Գերձակեան 5 . Անդրէաս Էսկիճեան 5 . Պետրոս Գէորգեան 5 . Գ. Պաքճեան 5 . Ն. Գայսերլեան 5 . Եղիա Գէօզեան 5 . Գէօզեան եղբարք երկու նուերատում 10 . Լ. Թագուրեան 5 . Ստեփան Գալորեան 5 . Յ. Զիչէքեան 5 . Չօրաեան 5 . Դ. Յագաեան 5 . Ա. Գափամաճեան 5 . Հազար Հազարեան երկու նուերատում 10 . Ոմն 5 . Ոմն երկու նուերատում 10 :

Տեարք Ա. Մ. Պէրպէրեան 25 . Ա. Փափազեան 20 . Պալեանի ձեռամբ 5 . Միքայէլ 5 . Ընթերցարանի վերջին ընդհանուր ժողովոյ երեկոյին 62 : Համագումարն է 262 :

ՏՕՐԹ ՔՕՐՆՖԷԼՏ

ՎԱՅԵԱԿ ՎԻԷՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Նախկին Ներքին Բժիշկ Վիէնայի ԳԵԼԽաւոր հիւանդանոցներուն . Մասնագէտ միզանցքային հիւանդութեանց, Գողղական ախտի, կոկորդի, քիթի և բերնի հիւանդութեանց :

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ առաջ լամբ 10 և 12, իսկ կէս օրէ վերջը լամբ 3 և 5, իր տունը Շէրիք փաշա փողոց, ԱՂԵՖՍԱՆԴՐԻԱ :

Ա. Զ. Դ.

Անցեալ անգամուան թերթէն այն բաժանորդներն որ չեն ստացած, կը խնդրուի որ բարեհաճին մեզ ծանուցանել :

—Մեր այս օրուան թերթին յապաղման պատճառը մեր հակառակորդներուն կողմէ մեզի եղած մէկ ախմար խաղն էր, որ անգարմանելի չէ բարեբաղդաբար :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՌՌԻՍԻԱ

Քիչկ ձերբակալուած 300 ուսանողներէն 16 ը մահուան պատապարտուած են և մերժած են Չարէն ներուզ խնդրել . հակառակ իրենց մերժումին՝ Չարը կեանքերնին շնորհած է : Անպատճառ սիպիր զրկած ըլլալու է :

Ուսանող մը, պետական բարձր պաշտօնակալի մը օրդին, որու վիճակուած էր կրթական նախարարը սպաննել, վարանում մը ունեցած է և հօրը խօստովանած է ամեն բան . հայրը կառավարութեան արտօնութիւն խնդրած է տղան Փարիզ արտօրելու :

Յուսահատ և զղջացեալ երիտասարդը անձնասպան եղած է :

ԲՕՐԹ ՌԻԿԱԼ

Ամբոխը երեք վանք կործանած է . Մօնթէ Բէթրալի վանքին յարձակումը շատ ծանր եղած է . թաղապետական պահակները քարկոծուած են :

ՇՓԱՅԱԾ ԱՂՋԻԿՐ

Նէն նիւար աղջիկ մըն էր . կրոր աշուրներով և կրոր ու պղնձագոյն դէմքով :

Նէնի հայրը իր նկատմամբ միշտ անտարբեր գտնուած ևւ մայրն ալ զինք չափազանց սիրելուն պատճառաւ, սնած էր այս երկու հակառակ բնութեանց մէջտեղ . ակամայ անուցանելով իր հետ սիրոյ քաղցր ու ասելութեան դառն ճաշակները . Կ'ըսուէր թէ Նէնի այս բնորոշ յատկութիւնները զպրօցի գրասեղանին վըրայէն կ'սկսի ևւ այս պատճառաւ շատեր կը հաստատէին թէ՛ Նէնի մասնկութիւնն ալ խաղաղիկ եղած չէ . Նէն անպայման անձնատուր կը լինէր ամեն անոնց՝ որոնք զինքը կը շողքորթէին ևւ իրեն նկատումները իրաւացի լինելը չ'զուանող աղջիկներուն կամիթներ կուտար, իսկ իրեն չ'համակերպող մանչերը՝ գնդասեղի հարուածներով կը վիրաւորէր :

Նէն այսպիսի խոտնաչփոթ սպաւորութեանց տակ իր արքունքին հասած էր, միշտ զեղեցիկ ևւ միշտ հրապուրիչ :

Նէն այսպէսով կըցած էր ճանչնալ ընկերական պարտականութիւններ ևւ սորված էր այն ամենը, ինչ որ աղջկան մը արժանիքը կրնային կազմել . բայց չ'էր կըցած մոռնալ սիրոյ ևւ ասելութեան պատուը, որ իր մանկութեան իր հետ սնած էր ևւ բնածին յասկութեան մը վերածուած :

Ինչպէս ըսինք, Նէն իր մօրմէն շփացած լինելուն համար, խիստ համարձակ մեծցած էր, այնպէս որ իր ամբողջ քմակաճոյքները մէկ մէկ հրամաններ կ'արժէին իրեն համար, ևւ իր մօրը մէկ հատիկը լինելուն համար, թշուառ հայրըն ալ շատ անգամ աչք կը գոցէր անոր թերութեանց, որպէսզի տանը մէջ խաղութիւններ տեղի չ'ունենան :

Այսպէս ուրեմն, Նէն արձակ համարձակ ածեր ևւ զօրացեր էր ևւ իր զեղեցիկութեամբ ու հրապուրիչ դէմքով շնորհագեղ աղջիկ մը եղած էր ևւ առիթներ ներկայացած էին մերժելու շատ մը աղնուական երիտասարդներու ձեռքը, որոնք թէեւ իւր հօր հաւանութեան կրնային արժանանալ :

Նէն շատ անգամ ջերմեանդ քրիստոնէի մը պէս պատարագին ներկայ կը գտնուէր . ուղորմածասէրի մը պէս միշտ ողորմութիւն կը բաշխէր, այնպէս որ շնորհագեղ օրիորդ անունը տարածուիլ պիտի սկսէր երբ ամուսնութիւնը վրայ հասաւ :

Շատեր կ'ասկածեցան . շատեր զարմացան ևւ շատեր ալ անկարելի համարեցին . բայց արդէն եղածն իրողութիւն մ'էր . Նէն հակառակ իր ծնողաց կամքին ևւ հակառակ շատ մը ազնուական, վաճառական, գրազէտ ու զարգացեալ երիտասարդաց փափաքին, կ'ամուսնանար աննշան, տգէտ մէկու մը հետ, որ սպասաւորութիւն կ'ընէր :

Իր միակ պատասխանն էր « պէտք է մօլորեալները փրկել, հոգի մը ապրեցնել ևւ կըռնակը ծեծելով մարդ ընել . . . ազատել » :

Եթէ աշխարհիս վրայ կայ առաքինութիւն մը, ասկէ աւելին չէ կարելի . Փառք պատիւ ևւ իշխանութիւն մեքծել ևւ այդ բարձունքէն խոնարհիլ անձնուրացութեամբ, յանձն առնելով մտնել հիւղակ մը՝ ուր մուրթեալներ կը գտնուեն փրկուելու :

Քաղցր եղաւ իրեն շատ մը օրերը, զիրար սիրեցին ու պաշտեցին, ինչպէս օտարներու նոյնպէս ևւ իր ծնողաց համակրանքն սկսան վայելիլ, որը պահ մը դադարած էր կատարուած անյարմար ամուսնութեան առթիւ :

Այլեւս շատ երջանիկ էին երկու սիրազոյգերը . երկու պատուոյ ընկերներ էին ինչպէս զոյգ մը տաարակներ . սիրով, հաշտութեամբ ևւ կարելի եղած զուարճութեամբ իրենց կեանքը

կ'անցնեն. եթէ կար զաչ մը իրենց սրբին մէջ...

Բայց ինչ կարեւորութիւն ունի առանձնութիւնն...

Ո՞վ ըլլայ շնորհապարտ չ'իջնիր. ո՞վ ըլլայ ներողամիտ չ'կանուր...

Այսպէս նէն եւ էն շատ ժամանակ իրենց ընտանիքը...

Սակայն ինչու չ'ենք զանազան կերպով դէպի ստպարէզ կը նետուէին...

Սա առաւել կատարեցաւ. ճշմարտութեան դէմ իր ըրած մտքառումներուն շանգորտ թիւերը...

Այ՛ն, այ՛ն, ըսաւ. պէտք է պատժել զքիս արեամբարողի մահը...

Պղտէսը աղուէսին լնգուէն հաճկոտութեամբ...

Օր մ'ալ գառաւորին զիմե՞ք իր ցաւը պատմեց եւ թշնամուսն մահը խնդրեց...

Դատաւորը հարցուց նէնի. —Այ՛ն, ցաւը ի՞նչ է...

—Գուցիկ հանրո՞ր որ շատ ազնուական տիկին մ'է...

—Պէտք է լսած է. —Դուզիկ հանրո՞ր ո՞վ է...

—Դուզիկ հանրո՞ր պիտիմե՞ն... —Դուք ինչնի՞ք էք...

Դատաւորը տեղեկանալով շփացած աղջկան յմահածոյքներուն...

Հոս նէն սթափած է խղճի խայթով ծանրարեւոտուած...

Դուք ինչնի՞ք էք. —Մենք սպասուել ենք...

Դատաւորը տեղեկանալով շփացած աղջկան յմահածոյքներուն...

Հոս նէն սթափած է խղճի խայթով ծանրարեւոտուած...

ՀՐԷՅ ԲԱՐԵԳՈՐԾԱՆԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԵՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿԻՐԱԿԻ 17 ՄԱՐՏ 1901

Table with 6 columns of numbers: 3178, 4575, 5441, 2877, 175, 253...

ՏՅԻ ՄԻՋՈՒԱԼ ԼԱՅՑ

ՎԵՆԱՑ ԱՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԻՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵԻՈՐԸ

ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԿԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրութեան կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները...

Ապահովագրութեան արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ...

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկաւ յացուցիչ ի Գահիրէ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԻՉ ՊԱՏՈՒԹՅԱՆ

ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ Է

Պատարի փողոց. Խաղէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի 'ճիշդ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից:

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍԵԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներքն են եւ ասոնցմէ մինչեւ ցարք 17.000.000 ծախուած է:

400 է աւելի վիսյակակներով եւ մեքայնեով վարձատրուած, Երաշխաւուելայ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստաներիսին մէջ ստացած է:

ՀԱԳԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԱՐՔՈՒՆԻԿԻՆ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշագրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ ի յատկանշիլն:

ԳԻՆ ՉԱՓԱՌՈՐ

ՄԱՆԿԱԲԱՐՉ

ՏԻԿԻՆ ՍՈՑԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ

Շարա-Ապսիդ-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսֆիլէն փոխադրած է Շարա Ապսիդ Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց, Անմէտ պէյ Ապսիդ Բազիլի 20 թիւ սեփականութեան մէջ:

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով զանիւրեմակ ազգայնոց եւ նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնարարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն:

Վկայեալ աղքատներուն համար ձրի դարմանում:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 17 ՄԱՐՏ 1901

Table with 6 columns of numbers: 7385, 138, 6881, 5691, 5396, 661...

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՑՈՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՄՏԻԼ ԱՋԻՉ ՍԿԶԲԸ

Օտանիյե դեղատանիկ ղիւնայի փողոցին մէջ:

Ժողովրդական Տպարանին մէջ կը պատրաստուին:

Այցեխարտեր, Երջարտարակներ, Գիտեր, Հրաւիրագրեր, Մանկագրեր, Տեղեկագրեր, Կանոնագրեր, Տուներ և այլ և այլ ւրաւրանի լիբրարերէն յանձնարարութիւնները կը վաճառուին հետեւեալ գրքերով:

- 1. ԲՆԱՇԽԱՐՀԻ ԲԱՌԱՐԱՆ Ի Ա. և Բ. պրակներն:
2. ՈՐՔՈՒՆԻ որոյ թուրքիս մուտքը, ինչպէս կը լսենք, արդիւրուած է:
3. ՀԱՆԱՔԱՄՈՑ հայոց ժողովրդական երգերու: